Երկրորդ ընթերցում
Նախագիծ

Կ-1148-13.01.2017-ՊԻ-010/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

«ԳՈՐԾԱՏՈՒՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Գործատուների միությունների մասին» Հայաստանի Հանրապետության 2007 թվականի փետրվարի 27-ի ՀՕ-115 օրենքի 18-րդ հոդվածի 2-րդ մասը ճանաչել ուժը կորցրած:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ
«ԳՈՐԾԱՏՈՒՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ

	Առաջարկության փոփոխության, լրացման) հեղինակը	Առաջարկությունը (փոփոխությունը, լրացումը)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի եզրակացությունը)
	1	2	3
1	ՀՀ Կառավարություն	«Ստուգումների մասին» ՀՀ օրենքի(այսուհետ՝ Օրենք) 2-րդ հոդվածի 1-ին մասում առաջարկվում է 1) «տրանսպորտի և կապի» բառերը փոխարինել «տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների» բառերով, 2) «էներգետիկայի և բնական պաշարների» բառերը փոխարինել «էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների» բառերով, 3) «տարածքային կառավարման» բառերը փոխարինել «տարածքային կառավարման և զարգացման» բառերով, 4) «տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեն» բառերը փոխարինել «էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեն» բառերով,	Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն

		5) «էկոնոմիկայի» բառը փոխարինել «տնտեսական զարգացման և ներդրումների» բառերով, 6) «քաղաքաշինության նախարարությունը» բառերը փոխարինել «կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեն» բառերով:	
		Օրենքի 2.1-ին հոդվածում «էկոնոմիկայի» բառը առաջարկվում է փոխարինել «տնտեսական զարգացման և ներդրումների» բառերով:	Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն
		Օենքի 4-րդ հոդվածի 3.1-ին մասի 6-րդ կետում առաջարկվում է «քաղաքաշինության նախարարության» բառերը փոխարինել «կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեի» բառերով:	Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն